ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2021թվականի N 79-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասով, որոշում եմ.

1.2021թվականի նոյեմբերի 8-ին ժամը 11:00-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով՝
1) Գեղադիր համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի N 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2)Գեղադիր համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 7-ի N 32-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3)Գեղադիր համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար ստեղծվող մրցութային հանձնաժողովի կազմում թեկնածուներ նշանակելու մասին
4)Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին
2.Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Թամար Մուդոյանին՝օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրել արտահերթ նիստի օրակարգը, որոշման նախագծերը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 5
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 նոյեմբերի 2021թվականի N 80-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ>>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի19-ի N596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>>փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված նախագծային փաստաթղթերը և դիմումը՝որոշում եմ.

1. Համաձայնեցնել կառուցապատող՝<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>>փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացրած <<Վոլիոս նախագծային ինստրտուտ>>փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Գեղադիր համայնքի 3-րդ փողոցի 26-րդ հասցեում Խաչատուր Բարսեղյանին պատկանող տարածքի 0.4 ԿՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:
2.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ.նոյեմբերի 9
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Կոտայքի մարզ, Գեղաղիրհամայնք
(մարզ, համայնք)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 05
09 նոյեմբերի 2021 թ.

Տրված է կառուցապատող՝«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ին՝,
ք□Երևան, Արմենակ Արմենակյան փողոց, 127 շենք, / 273□140□01□857 /
(իրավաբանական անձի տեղանունը, գտնվելու վայրը)

Կոտայքի մարզ, Գեղաղիր համայնք 3-րդ փողոց, 26 տուն(Աբովյանի շրջ.), Խաչատուր Բաբսեղյանին պատկանող տարածքի 0.4կՎ Էլեկտրամատակարարման /230620200-07-0099/
(հասցեի հանրագիր տեսակը հասցեի տեսակը)

Օբյեկտի արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են՝/Աշխատանքային նախագիծ՝ 6321/ «ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-Ի, /ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ-17208/կողմից:
(անհրաժեշտ աշխատանքների կազմակերպման ամսաթիվը, տրամաբանական հաջորդականությամբ)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 6 ամսվա ընթացքում:
(շինարարական աշխատանքների տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2)շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԳԵՂԱԴԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ
/ստորագրություն/